

Տարեկան գինը 10 բուբլ, կես տարվանը 6 բուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Խիթի խում գրվում են միմյուր խմբագրատան մէջ:

(Կտարադրադրացիք գիտում են ուղղակի
Тифлиса, Редакция „Мусако“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Մացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

երես.
3 բ.
մե.
ններ.
երի.
«Մը

ԻՌՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածողները.— Ներքին տե-
սու թիւն, Նամակ խմբագրին: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրերը: Արտաքին տեսու-
թիւն: «Темпы» լրագրի թղթակցութիւնը հայե-
րի մասին: Հայտարարութիւններ: Բանասի-
րական: Խննթը:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԵ-
ՆԵՐ**

Մինչև որ Գերմանիան զբաղ-
ված է հրէաների հարցով, իսկ
գերմանական պարլամենտը պատ-
րաստվում է զինուորական նոր
օրէնքի վրա վիճաբանելու և ըննե-
լու այն խնդիրը թէ հնարաւոր է
արդեօք սօցիալիստների դէմ հրա-
տարակիւս օրէնքի զօրութեան
ժամանակամիջոցը երկարացնելու,
— ֆրանսիական սենատը վիճա-
բանում է բարձրագոյն ուսման ա-
զատութեան օրէնքի վրա:

Չարմանալի է որ ժամանակա-
կից Եւրոպայում ազատութիւն
բառը անխտիր գործ է ածվում
ամեն կուսակցութիւններից, որ-
պէս ամենահամոզիչ բառ...

Մի կողմը հաստատում է որ
բարձրագոյն ուսման ազատութիւն
տալ՝ նշանակում է իրաւունք տալ
բարձրագոյն դպրոցներ հիմնելու
երկրի մէջ թէ պետութեանը և
թէ կրեւին: Միւս կողմը կար-
ծում է որ եզուիտներին ազատու-
թիւն տալ ֆրանսիայի մէջ հիմ-
նել և կառավարել իրանց սեփա-
կան բարձրագոյն դպրոցները, նը-
շանակում է սպանել ազատու-
թիւնը:

Եւ ահա վիճաբանութեան ժա-
մանակ միմեանց դիմաց կանգնած
են երկու մեծ հասարակութիւն-
ներ՝ ժամանակակից աշխարհական
հասարակութիւնը և միջնադա-
րեան կղերական հասարակութիւ-
նը: Վիճաբանողները, օրինակ Շէ-
նրոն մի կողմից և Պելլետան—
միւս կողմից միմեանց երեսին դը-
ցում են ամենատանտների յանդի-
մանութիւններ: Եւ չակոյմեանները
ուսման կատարեալ ազատութեան
մէջ միայն լուսաւոր կողմեր են
տեսնում, ձախակողմեանները ներ-
կայացնում են ամենամութ պատ-
կեր ազգի ապագայ զարգացման,

երբ եզուիտներն էլ իրաւունք կու-
նենան կրթել բաղաբացիների նոր
սերունդը: Եւ զատաւիտ հանրապե-
տականները կղերականների պատ-
մական անցեալը յիշելով, նկարա-
գրում են իրանց ճառերի մէջ ե-
կեղեցու անհամբերողութիւնը, նրա
հալածանքները գիտութեան և լոյ-
սի դէմ, հին ինկիլիցիան,— պահ-
պանողականները յիշեցնում են
հանրապետականներին ֆրանսիա-
կան մեծ յեղափոխութեան արած
սխախտումները, առաջին հանրապետու-
թեան բռնաւոր ոգին, գլխատում-
ները և այլն...

Երկու կողմիցն էլ փոխադար-
ձապէս թափվում են միմեանց
վրա ամենախիստ մեղադրանքներ,
երկու կողմիցն էլ վիճաբանելու
ժամանակ հեռանում են բուն
խնդրից:

Մէկ բան պէտք է խոստովան-
վել. հանրապետականները սաստիկ
վախենում են այն մտքից որ կը-
ղերականներին կը տրվի բարձրա-
գոյն դպրոցներ հիմնելու և պա-
հելու իրաւունքը. նրանք կարծես
նախազգում են որ աշխարհական

համալսարանը, թէ և գիտութեան
կողմից կարող է մրցել կղերական
համալսարանի հետ, բայց բարո-
յական ազդեցութեան կողմից
նոր սերունդի վրա, չէ կարող մըր-
ցել կղերական համալսարանի հետ...

Եւ, կղերական եզուիտական
համալսարանը, ինչպէս և առհա-
սարակ եզուիտական բոլոր դպ-
րոցները հաստատվելով երկրի մէջ,
փոքր առ փոքր կը սկսեն իրանց
ներգործութեան տակ զցել ամ-
բողջ նոր սերունդը, աղավաղել
նրա բարոյական կողմը, ձուլել
նրա սիրտն ու միտքը, ինչպէս
որ այդ հարկաւոր է սուրբ հայ-
րերի անձնական շահերի համար:

Կղերական կուսակցութիւնը չէ
վախենում ուսման ազատութիւ-
նից, որովհետեւ գիտէ թէ ժա-
մանակով, փոքր առ փոքր, կեն-
թարկի իր ազդեցութեանը ժա-
մանակակից ֆրանսիայի ամբողջ
նոր սերունդը, թէ իր ստոր-
երկրեայ միջոցներով կը յաղթէ
հանրապետութեան ազատ ոգին:

Գ. Ա.

Ի Ն Թ Ը

ԱՐԿԱՄԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բ.

Հետեւեալ աւուր առաւօտեան պահուն, երբ ա-
րեգակը առաջին ճառագայթները տարածվեցան
երկրի վրա, Բայազէդի մէջ և նրա շրջակայքում
բացվեցաւ մի սարսափելի տեսարան: Այժմ պարզ
տեսնվում էր հետեւանք այն կոտորածի, որ ամ-
բողջ երեք օր և երեք գիշեր կատարվել էր բար-
բարոսի ձեռքով: Քաղաքում տիրում էր գերեզմա-
նական լուսթիւն, որ երբեմն ընդհատվում էր ագ-
ռաների կռիւներով, որոնք խուճրեցով սաւառ-
նում էին այստեղ և այնտեղ՝ մեռելոց ուսուլու-
համար փողոցները այդ դժբախտ քաղաքի ներկա-
յացնում էին խիստ տխուր և օրոտաշարժ պատ-
կեր, — աները դարձել էին մոլորի կոյտ... տեղ-տեղ
ձերբուցում էին դեռ չը վառված նիւթերը... համա-
րեա ամեն մէկ տան մօտ ընկած էին ձերբեր, և-
րիտասարդների, կնիկների և երեխաների դիակ-
ներ... սոված չները ազահութեամբ քարշ էին տա-
լիս դիակները, և միմիջայով, գոմաւով աշխա-
տում էին վանել խուճրեցով ցած իշնող ագռա-
ներին... Ամեն կողմից, ամեն տեղից, ամեն բակից
և շուկայից փչում էր լուծվող դիակների խեղդիկ
զարչահոտութիւնը...

Այսպիսի մեռեալ քաղաքի մէջ կանգնած էր
Բայազէդի միջնաբերդը և սպասում էր իր ցաւալի
օրհասին...

Պաշարումը հետզհետէ սաստկանում էր: Սար-
ձօր, բլուր, դաշտ և տափարակ պատած էին բա-

չիբօզկիների բաղմամբ, մի և նոյն ժամանակ
խառնափնթոր հրոսակներով: Բանակները զետեղ-
ված էին առանձին խումբերով, և իւրաքանչիւր
խումբի մէջ տեսնվում էր չարժու, իրարանցում
և աղմուկ: Կրօնական մոլեռանդութիւնը, խառն-
ված զինուորական անդիութեան հետ, անցնում
էր բարբարոսութեան ամեն չափից և սահմանից:
Մարդը, գազան դարձած, կեղծում էր, մահաց-
նում էր իր նմաններին...

Արեւելից կտանալուց յետոյ, նրանք սկսել էին
այժմ յագեցնել իրանց ընչափութեան ծարաւը:
Մի տեղ գետնի վրա տարածել էին քաղաքումը
հարուստ համարված հայերին և զանազան տան-
ջանքներով չարչարում էին, որ նրանք յայտեն, թէ
որտեղ են թագգրի իրանց փողերը: Թշուառ-
ները լացում էին, աղաղակում էին, ասելով, թէ
ինչ որ ունէին՝ տուեցին, այլ և ոչինչ չէ մնացել:
Նրանց չէին հաւատում, և հօր աչքի առջև երե-
խաներին մորթում էին, որ ստիպեցնեն յայտնել
իրանց պահաւոր: Մի այլ տեղ քրդերը բաժանում
էին զիգված աւաղը. նրանց կնիկները ուրախու-
թախ բաժնում էին ձիաների վրա, որ տանեն ի-
րանց տները: Մի փոքր հեռու բաժանում էին հայ
գերիներին, բայց մի գեղեցիկ կնոջ կամ աղջկայ
վրա չէին համաձայնում, վիճում էին և սպառնում
էին միմեանց սրբով: Մի ուրիշ տեղում գաղբը,
վարկերի կատուները, գիշակի թռչունների հետ,
հաւաքված անթաղ դիակների վրա, իրանց առա-
ւօտեան նախած չիլին էին անում: Գրանցից ոչ
այնքան հեռու, կրօնասէր մահմետական զինուորը,
խորին ջերմաւանդութեամբ իր վաղորդեան նա-
ման էր անում, և արեւմտ ձեռքերը դէպի եր-
կինք բարձրացնելով, փառաբանում էր խալիֆ Ալ-
լահին...

Այդ բոլոր կատարվում էր վառօդից և խա-
րդիկներից բարձրացած ծխի ու մթնի մէջ, որ թանձր
մառախուղի նման պատել էին հօրիզոնը, և ար-
գելում էին արեգակի ճառագայթների ներս թա-
փանցելուն: Թնդանովները որոտում էին, միմի-
խարի բերդի կողքերը բարակոծում էին, բայց նա

անշարժ, բուռնների բարձրութեան վրա նստած,
տակաւին արհամարհում էր թշնամու անդադր
հարուածները:

Բայց մի տեղ ամբողջ բանակի ուղադրութիւնը
զրաւել էր մի մարդ. Նա երբեմն թռչկոտելով,
երբեմն ծափ տալով, անցնում էր բանակի միջից,
և մի և նոյն ժամանակ և զանակում էր մի այսպի-
սի յիմար քրդերէն երգ.

«Պառաւ տաւր գորտ դարձաւ,
«Գորտ դարձաւ, ծովը մտաւ,
«Ծովից աւաղ դուրս հանեց,
«Աւաղը ոսկի դարձաւ,
«Ոսկին տուեց մի այծ առեց,
«Կաղնիկ, քոստո այծ առեց:
«Այծիկ, այծիկ, ջան այծիկ,
«Ջանս քեզ դուրբան, այծիկ,
«Այս, ինչու դու եղար
«Այսպէս քոստո ու կաղնիկ...»

— Եւ նրա... ձայն էին տալիս ամեն կողմից
քրդերը, և հաւաքվելով նրա շուրջը, ստիպում էին
կրկնել իր երգը:

Եւ իրաւ, այդ մարդը խնձ էր, կամ գոնէ
պապէս ձևացնում էր իրան: Նա հագնված էր այն
կերպով, որպէս հագնվում են մեզ մօտ լարախա-
ղացիների օգնականները, որոնց կոչում են «տակի»
մասլաբայ», և որոնք լարի ներքուստ զանազան
տեսակ խեղդապատկութիւններով ծիծաղեցնում են
հանդիսականներին: Նոյնը անում էր և այդ խն-
թը: Նա մի բարձրահասակ երիտասարդ էր վայ-
րենի գէպով, գլխին դրած ունէր հին թաղիքի կը-
տորից անշարժ կերպով կարած, մի երկայն գդակ,
որ վերջանում էր քառանկյունի ձեով, և իւրաքան-
չիւր անկիւնից քարշ էին ընկած մի-մի փոքրիկ
զանազաններ, որոնք նրա ամեն մի շարժումներից
զընգզընգում էին և աններգայնակ ձայնի էին հա-
նում: Երեսը մրոտած էր կռկաներով, որի վրա
զանազան ուղղութեամբ քաշված էին զանազան
զոյններով գծեր, — կարմիր, դեղին, կապոյտ և այլն:
Բացի գդակից, ամբողջ հագուստը մի կտորից էր
բաղկացած, դա զինուորի քրդերի մի վերաբերու-

էր, որի մէջ վախճանված էր նա բոլորովին մերկ
մարմնով: Մէջքը պնդած էր մի թօկի կտորով, որ
գօտիի տեղ էր ծառայում: Ոտքերը բարիկ էին,
ոտնամաններ չուներ:

— Ապա էլի նման մէկ զուս, ասում էին նրան:
Խնթը մատները կոխում էր ականջների մէջ,
կռնում էր, բերանը լայն բաց էր անում, և որ-
քան ձայն ունէր, սկսում էր էլի նման զուս:
Բազմութիւնը ծիծաղում էր և ամեն կողմից ձգում
էին նրան պղնձէ դրամներ, Նա վեր էր առնում
դրամները, զարմացած նայում էր նրանց վրա, և
մի կողմ էր ձգում, ասելով, թէ ինչ հաց տուե-
ցէք: Նրան տալիս էին հաց, առնում էր, և ահա-
գին պատառներով բերանը դնելով, առանց ծամե-
լու կուլ էր տալիս:

— Գու, երկի, արջի նման պարել ևս գիտես,
ասում էին նրան, — ապա տեսներք ջո հոնարը:
Խնթը սկսում էր զանազան անճոռնի շարժ-
մունքներ անել, չորս թաթիկների վրա սողալ,
ոտները բարձրացնել, ձեռքերի վրա կանգնել, և
ուրիշ տեսակ-տեսակ յիմարութիւններ անել:

Մի ամբողջ օր խնթը մնաց քրդերի բանակի
մէջ. զուարճացնում էր բոլորին, խօսում էր քր-
դերէն որպէս մի քուրդ, հայոցում էր, անիծում
էր ուսմանը, գոռում և գոչում էր, թէ բոլոր
զաւուրներին պէտք է կոտորել: Մինչև կէս գի-
շեր նրա ձայնը ամեն կողմից լսելի էր լինում: Բայց
միւս առաւօտեան խնթին բանակի մէջ էլ ոչ ոք
չը տեսաւ...

Գ.

Միջօրէի արեգակը սաստիկ այրում էր. տօթը
խեղդելու չափ անտանելի էր: Օրվայ այն ժամն
էր, երբ ճանապարհները դատարկվում են ուղե-
ւորներից, և ամեն մարդ քաշվում է մի հովանա-
ւոր տեղ, զովանալու, և մի փոքր ազատ շունչ
առնելու համար: Նոյն ժաման Բայազէդից դէպի
Ալաշկերտի կողմերը տանող ճանապարհով միայ-
նակ գնում էր մի մարդ: Ճանապարհը ողորմօր
պտոյտներով անցնում էր լեռների միջով, և բարձ-
րութիւնների անդադր երկնայնքը սաստիկ զը-

ՇՈՒՇՈՒՑ մեկ զորում են, որ միջոցով Գրգ հա-
րում կարող նամակի մեջ տպված էին տեղալի-
սդարանի անուամբ եղած նուիրատուութիւնները,
մեջ թւում ասված էր թէ ստացվել է Շուշուց
այն 16 հատոր գիրք: Շուշու նամակագիրը արե-
նում էր, թէ բացի գրքերից, այս քաղաքից նոր
տնայտուրանքն է զրամական նուէրներ են
ել գ. Հայրուհի մանկ ձեռքով, որոնք մասն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մամուլի տակից դուրս են եկել և վաճառվում են Կենտրոնական Իրավաձառանոցում հետևեալ գրքերը:

Մանկական երգեր Գամառ-Գաթիպայի, կազմած	—	ր.	25	կ.
— նոյնը անկազմ	—	»	15	կ.
Թաւամաղ մեղու պատկերազարդ, կազմած թարգ. օր Ն. Տէր-	—	»	40	կ.
Մարկոսեանի Վարմիր լապտեր պատկերազարդ և կազմած, թարգ. օր Ն. Տէր-	—	»	50	կ.
Մարկոսեանի — նոյնը առանց կազմի	—	»	30	կ.
Վէպեր. Յ. Գրիգորեանցի	—	»	60	կ.
Պէպո. կոմեդիա երեք արարվածով, հեղ. Գ. Սունդուկեանի	—	»	30	կ.
Սօրեն կամ աշխատութիւն, հեղ. Տ. Գառնաթարգմ. Գաղիերէնից.	1	»	—	կ.
Խորհրդաւոր կղզի, հեղ. Ժ. Վերն 3 հ. թարգ. Գաղիերէնից.	4	»	—	կ.
Դիւանակ բլուր. հեղ. Էօթէն Սիւ 2 հ. թարգ. Գաղիերէնից.	2	»	75	կ.
Պատանեկան ներշնչումներ, հեղ. Հրանտ Սասունցի	—	»	60	կ.
Սահմանադրութիւն և հայ ժողովուրդն Հր. Սասունցի.	—	»	35	կ.
Մի կաթիլ արտոյր, զոր կը հեղու. Սիսակ հայ մեխիկին վրայ	—	»	35	կ.
Խօսք զհայրենաց հեղ. Վ. Վ. Պարտիզանցի	—	»	70	կ.
Թորոս աղբար Հայաստանի ծամբորդ հեղ. Սրուանձտեանց	1	»	25	կ.
Մանանայ նոր հեղինակի	1	»	75	կ.
Սիրաք և Սամուէլ բարի հօր կրթական դասեր, հեղ. Խրիմիան Հայրիկ	1	»	45	կ.
Մարգարիտ արքայութեան երկնից, նոյն հեղ.	—	»	75	կ.
Վանդուկ. կուժ մի ջուր իւր այրած հայրենեաց վերայ կ'սրկէ Խրի-	—	»	20	կ.
մեան հայրիկ	—	»	40	կ.
Թէ ինչ շահեցանք Բերլինի վեհաժողովէն, հեղ. Մ. Ձերազի	—	»	60	կ.
Հայաստան և Բոսնիայ նոյն հեղ.	—	»	—	կ.
Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս. Ար-	—	»	50	կ.

Հրատարակութիւն Չարմայր Մանրեանի	—	»	—	կ.
Փարոս Հայաստանի, պատկերազարդ հանդէս.	1	»	—	կ.
Ներայր և քոյր Գերմանական վէպ պատկերազարդ	—	»	30	կ.
Ներքալաղուստ Գերմանական վէպ պատկերազարդ	—	»	35	կ.
Հսկայական ձեռքեր Անգլիական վէպ պատկերազարդ	—	»	10	կ.
Իշխան Բէհրեթեանի Հրատարակութիւններ	—	»	—	կ.
Վէպեր իմ վեշեր, Փարս երեք պատկերով Մ. Տ. Գ.	—	»	40	կ.
Բեքեր բիճու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ	—	»	25	կ.
Աշնանային երեկոյ գիւղում, վոդվիլ մէկ արարուածով.	—	»	25	կ.
Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով	—	»	40	կ.
Ժանս և Ժանէտ, օպերա-վոդվիլ մէկ գործողութեամբ.	—	»	40	կ.
Պառաւնեքին խրատ. վոդվիլ մէկ արարվածով Մ. Տ. Գ.	—	»	50	կ.
Տիկինը նրան սպասում է, կատակ երգութիւն մէկ արա-	—	»	30	կ.
ր Բ. Է. Է. Է. Է.	—	»	40	կ.
Անանուն կատակ. կատակերգութիւն մէկ արարուածով.	—	»	30	կ.
Փակուած դրան մօտ. պատկերամենախօսութիւն	—	»	—	կ.
Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասադրեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուներով, դասական պիտոյքներ ուսումնարանների և աշակերտների համար. Հայերէն, Ռուս- սերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտու- թեան զանազան ձեւերով վերաբերեալ գրքեր պատուէրները կատարվում են ամենայն արա- գութեամբ: Օտարաբաղադրեալ իրանց պահանջները պէտք է ուղարկեն հետևեալ հասցեով Դե Тифлисе. Въ Центральную книжную торговлю	—	»	10—10	



Վերակի, յունվարի 27-ից սկսած, Գուշիբեան փողոցի վրա, ցիրկի մօտ գտնված բալագանի մէջ կը ներկայացնուի հասարակութեանը երբեք այստեղ չը տեսնված երեւոյթ, այն է ԵՌՕՊԵՏԻ ԵՌԵ- ԶԻՆ ՀՍԿԵՑ ՕՐԻՈՐԴ ԱՄԱԼԻԱ և աշխարհի ամենափոքր ԿՆՏՐԻԿՆԵՐ ՄԵՐԿԻՉ ՀԵՆՐԻԻ ՎՕԼԳԻ և ՄԵՐԿԻՉՈՒՅԻ ԼՈՒԻՉԷ՝ Տե- ղերի գնորդ, առաջին տեղեր 50 կօպէկ, երկրորդ 30 կօպէկ: Լրեւիանները կէսն են վճարում:

ՍԵՐՄԵՐ

ՊԱՐՏԵՁԻ բոյսերի և ծաղիկների ՍԵՐՄԵՐ, բոլորովին թԱՐՄ ստացված են երֆուրայից և ծախվում են Կովկասեան ԳԻՒՂԱՏԵՏԵՍԱԿԱՆ ընկերութեան գործակալար ԼԱՐՇԵԻ ԽԱՆՈՒ- ԹՈՒՄ, ԳՕԼՕԿԻՆՍԿԻ պրօսպեկտի վրա № 11: Օտարաբաղադրեալներին ուղարկվում են սեր- մերի ՑՈՒՑԱԿՆԵՐԸ:

3—10

ԲԺԻԶ Բ. ՆԱԼԱՍԱՐԳԵԱՆԻ

«Իրֆտերիտ» կամ «փողացա» գրքոյը վաճառվում է հեղինա- կի մօտ քաղաքային հիւանդանո- ցում, Կենդրոնական գրալաճա- ուանոցում և Օ. Գրիգորեանցի Կովկասեան գրալաճառանոցում: Գինն է 25 կօպէկ— բարեգործա- կան նպատակով:

ՆԵՐՎԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ԲԵՖԻԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երես- ներ: Լմեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում:

Ստորագրվել կարելի է ԳԵԼԵՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐ» տպագրութեան համար, իսկ թԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «ՄԵ- շԱԿԻ» խմբագրատանը Յ. ՄԵԼԻՔ-ՅԵԼԿՈՐԵԱՆԻՆ:

Աշխարհահռչակ արտիստ և պատանշան- ների ապկտ Ն. Ա. Կօզլով պատիւ կունենայ դարձեալ մի մեծ սպիրիտիկական ներկայա- ցումն տալ Արծրունու թատրոնում:

2—2

ՆԻԿՈԼԱՅԵՍԿԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ՌՈՒՍԱՑ ՈՒ- ՍՈՒՄԵԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ հարկաւոր է ՎԱՐ- ՉԵԼ չորս մեծ և չորս միջակ սենեակներ մեծ բալոյ, հաւաքարում, աւելի ՊՕԿՐՈՎՍԿԻ ԿԱԶԱՐՄԻ մօտերում:

Այգլիսի շինութիւն ունեցողներին խն- դրում եմ շնորհ բերել իշեալ ուսումնարանը, ՊՕԿՐՈՎՍԿԻ ԿԱԶԱՐՄԻ ԴԻՄԱՑ, և խօսակցել պայմանների մասին ուսումնարանի տեսչի հետ, ամենայն օր ճաշից յետոյ 3 ժամից մինչև 7 ժամը երեկոյեան:

3—3

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ ՊԱԼԱՏԱԿԱՆ ԳՐԱ- ՍԵՆԵԱԿԸ հրապրում է ցանկացողներին ՂԱ- ԲԱՑԱԶՈՒՄ մի ԲԱՐԵ ՇԵՆՈՒԹԻՒՆ կառուցա- նել: Երևութեան ՊԱՆԸ կարելի է ՏԵՍՆԵԼ պալատական ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ ներկայ տար- վայ մինչև Մարտի 1-ը:

2—3 (2)

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱԲԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայ- տնում է, որ եկող մարտի 1-ից կը սկսվի փողոցներում թափառող և մետաղի կամ կա- շու անուր չունեցող ՇԵՆԻՔ՝ ոչնչացնելը: Իրանց շներին պահպանել ցանկացող ՏԵՐԵՐԸ նա- խագգուշացնվում են այդ մասին:

1—3

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱԲԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ ՌՈՒՍԱՑ ԲԱԶԱՐԻ և ՀԱՒԼԱ- ԲԱՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ վրա կառուցված են Ա- ՌԵԻՏՐԱԿԱՆ ՇԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ վարձով տալու համար. ուսաց բաղարի վրա 18 հիւանդներ և Հաւաքարի հրապարակի վրա 40: Յիշեալ շինութիւնները ՎԱՐՁՈՎ վերցնել ՑԱՆԿԱՑՈՂ- ՆԵՐԸ հրաւիրվում են քաղաքային վարչու- թիւնը, որի ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ ամենայն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 10 մինչև 2 ժամը երեկոյեան վարձի ՊԱՑՄԱՆԵՐԸ կը յայ- տնվեն:

3—3

ՆԵՐՍԻՍԵԱՆ հայոց ազգային հոգեւոր ԴԸ- ՊՐՈՑԻՄ, հոգաբարձական խորհրդարանի մէջ, գաղղի ՄԱՐՏ ԱՄՍՈՑ 12-ին, երեկոյեան ժա- մը 7-ին, կը լինի ԱՃՈՒՐԻ (առանց կրօնա- ծուրդի) կապալով տալու Թէէթի սուրբ ԳԼ- որգայ ուխտատեղւոյ գաւթումը ՄԻ ԿՐՊԱԿ ԽՐԱ ՄԻ ՍԵՆԵԱԿՈՎ: Պայմանաթուղթը կա- րելի է կարգալ հոգաբարձութեան դիւանա- տան մէջ ամեն օր բացի կիրակից և տօ- ներից, առաւօտեան 10-ից ց12 ժամը: Անդամ հոգաբարձութեան Ար. Նահապե- տեանց

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Երգն կեանց բահանայ—Մանկա- կան երգարան, երգեր և պարերգեր, ընդունված է ներսիսեան և Գայանեան դպրոցներում: գինն է . . . — ր. 20 կ.
2. Մեծատուն կանց—Երգարան աղջ- կանց և աշակերտուհեաց Հայկական ու- սումնարանաց. 1 ր. — կ.
3. Բժիշկ Բ. Նաւասարդեանց Դիֆտերիա բողազացա. . . — ր. 25 կ.
4. Բժիշկ Գ. Տէր-Գրիգորեանց—Վա- րակիչ հիւանդութիւններ.

(Մաղիկ, կարմուկ, սկարլատին, բժաւոր տիֆ, անդրադարձ տենդ, դիֆտերիա, ընդ- հատ տենդ, խօլերայ, դեղին տենդ, որովայ- նատիֆ և ժանտախտ):

Սրաց յատկութիւններն, ծագման և տա- րածման եղանակներն և նախապաշտպանո- ղական միջոցներ:

Վաճառվում են Զ. Գրիգորեանցի Կովկա- սեան գրալաճառանոցում:

7—8

Մանուկ բարվանսարան այր- վելուց յետ, նորից բացված է խ- տակ մոմի առևտուր Սիմեան փո- ղոցում Երծրունու բարվանսարա- յումը № 14. իւրաքանչիւր շաբաթ ստացվում է նոր շինուած խտակ մոմեր իմ սեփական զաւօղից և որոնք վաճառվում են էժան գնե- րով. խնդրեմ գնողներին չը թող- նել իրենց այցելութիւնները:

Յովհաննէս Կուրծեան 4—4

Փետրվարի 12-ից ԲԱՅՎԵՑ իշխան ՍՈՒՄ ԲԱՏՈՎԻ տանը ԿՕՆԻՏԵՐԻ և ՀԱՅԱՐԱՐԻ (не- карна) մազաղին «ВАРШАВСКАЯ ПЕКАР- НЯ» վերնագրովը, որտեղ կը վաճառվին զանազան տեսակ խմոր և դէնսեր, նոյնպէս կը վա- ճառվին զանազան տեսակ կօնֆէտներ ար- ժան գնով. Թէ փքը և թէ մեծ քանակութեամբ ցանկացողները կարող են ստանալ ԻՄ ԳՈՐԾԱ- ԲԱՆԻՑ: Օտար քաղաքացիք կարող են դիմել հե- տեալ հասցեով. СОЛОЛАКИ, ВЪ ВАРШАВ- СКОЙ ПЕКАРНИ Мартироу Ахназарову. Պա- տուէրները կը կատարվին ամենայն ճշգրտեամբ, գնողներին մեծ զիջումն անելով և փօստի ծախսը մեղ վրա առնելով: Կօնֆէկտների գինը ֆունտը 40 կօպէկից մինչև 1 ր.:

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իւր ու- սումն Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ օրիորդաց ԳԻՄՆԱ- ՋԻԱՆԵՐԻՑ մինի մէջ, ցանկանում է վարժու- հու պաշտօն ստանալ Կովկասի ՀԱՅՈՑ ՈՒ- ՍՈՒՄԵԱՐԱՆԵՐՈՒՄ: Պայմանները խնդրում և ուղարկել հետևեալ հասցեի. С. Петер- бургъ, Новая улица, домъ № 14 кв. № 10 Хр. Ив, Иоану.

5—5